# «UNIMOBILE» ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հաճախորդը պարտավոր է խստորեն պահպանել «UNIMobile» բջջային հավելված (այսուհետ՝ Հավելված) մուտք գործելու մուտքանունի, գաղտնաբառի և այլ նույնականացման տվյալների գաղտնիությունը՝ կանխելու համար ապօրինի մուտքի, իր տվյալների և միջոցների օգտագործման հնարավորությունը
2. Հաճախորդի նույնականացումն իրականացնում է գաղտնաբառի, մուտքանունի, նույնականացման ունիկալ կոդի և նույնականացման այլ տվյալների մուտքագրմամբ.
3. Հաճախորդը համաձայնում է, որ Հավելվածից օգտվելիս վերջինիս հաշվով կատարվող հարցումները կատարվում են Հաճախորդի կողմից իր կամահայտնությամբ կամ գիտությամբ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:
4. Նույնականացման ունիկալ կոդի մուտքագրումն ունի բնօրինակ ստորագրման հավասարազոր իրավական ուժ և դրա մուտքագրումը հիմք է Բանկի համար՝ Հավելվածում հրահանգներով տրված ֆինանսական գործարքների իրականացման համար:
5. Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել փոխել գաղտնաբառը, եթե առաջացել է գաղտնաբառի հրապարակման վտանգ կամ այն արդեն հրապարակվել կամ այլ կերպ հայտնի է դարձել այլ անձանց:
6. Մուտքանունը և գաղտնաբառը Հաճախորդին հանձնելու պահից դրանց անվտանգ և գաղտնի պահպանության պատասխանատվությունը ստանձնում է Հաճախորդը:
7. Բանկը և Հաճախորդը (այսուհետ՝ Կողմ, իսկ միասին՝ Կողմեր) պարտավորվում են առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության Կողմերի միջև կնքված Պայմանագրի/Դիմում-պայմանագրի հետ չկապված նպատակներով չօգտագործել և որևէ երրորդ անձի չհաղորդել, բացառությամբ ստորև նշվածների, Պայմանագրին/Դիմում-պայմանագրի առնչվող ցանկացած տեղեկություն, որը հանդիսանում է կամ կարող է հանդիսանալ բանկային, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ տեղեկատվություն:
8. Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է օգտագործել, հրապարակել կամ այլ կերպ տրամադրել այլ անձանց վերոնշյալ տեղեկությունները՝ օրենքով սահմանված կարգով, եթե.
   - տեղեկատվությունն օգտագործվում է Կողմերի կողմից՝ Պայմանագրով/Դիմում-պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու նպատակով, կամ՝
   - տեղեկատվությունը ստացված է պաշտոնական և(կամ) այլ բաց աղբյուրներից, կամ՝
   - այն գործող ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսած դեպքերում, կարգով և ծավալով ներկայացվում է պետական իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց:
9. Հաճախորդը Պայմանագիր/Դիմում-պայմանագիր կնքելով հաստատում է, որ ծանոթացել է վերոնշյալ կանոններին և պարտավորվում է խստորեն հետևել դրանց, ինչպես նաև ընդունում է, որ կարող է կրել սույն կանոնների խախտման համար պատասխանատվությունը: